Տարօսիկ - Յունուար

Ձեր մնտուկներ լեցուին հացով, աւետիս,
ձեր ոչխարներ գային ջոկով, աւետիս...

Ձեր կարասներ լեցուին գինով, աւետիս,
ձեր խորոզներ կանչեն ձենով, աւետիս...

Ձեր հեռաւորք գային բարով, աւետիս,
ձեր ճուկն ու թաս էրթայ ու գայ, աւետիս...

Ձեր օրօրոց էրթայ ու գայ, աւետիս,
ծառ խնկենի, արմաւենի, աւետիս...

Սմբատ...
Սմբատ, Տրդատ...
Սմբատ, Տրդատ, Բագրատ...
Այն ո՞վ է...
Ամէն տեղը ծուռիկ մուռիկ,
        կը քալէ կուզիկ մուզիկ...

Սմբատ, Տրդատ, Բագրատ...

Ո՜ւղտը...
        ծուռիկ մուռիկ...
Սապա՜տը...
        կուզիկ մուզիկ...
Սապատին վրա՞յ...

Մելքոն,Գասպար...
        եւ Պաղտասար...
                Աւետիս... Աւետիս...

Եփէ, մայրիկ եփէ չամիչով փիլաւ,
հիմա պապան կու գայ, անօթի ծարաւ։
Պապային պասթոնը ժամ է մնացեր,
մեծ մայրիկին աչքերը ճամբան մնացեր...
                        Մայրի՜կ, շատ տարիներո՜ւ...

Կաղին նուշ ընկոյզ,
        չիր չամիչ ու թո՛ւզ...

Կաղին նուշ հնդընկոյզ,
        չի՛ր չամիչ ու թո՛ւզ...
Չամի՛չ տուէք,
        ճակատիս շարեմ...
Ընկո՛յզ տուէք,
        գլխուս ջարդեմ...
Դուռ դրացի՜,
        ընկեր ընկերուհի՜,
                ուրախացէ՜ք...

Զար զընգը, զար զընգը, Թող զընգայ...
Պարենք գիշեր լուսնկայ...

Էս գիշեր լուսնակ գիշեր...
Զար զընգը, զար զընգը, Թող զընգայ...
Ձիւն իջեր գետին նախշեր...
Պարենք գիշեր լուսնկայ...

Ուղտը պոչը,
        պոչը ոչը,
                սապա՛տը...
                        Աս պա՞տը...
 Անապա՛տը...
        Ա՞ն պատը...

Շունը կը հաջէ, հա՛ֆ հա՛ֆ հա՛ֆ...
                        Կարաւանը կը քալէ...
Սմբատ, Տրդատ, Բագրատ...
                        Սմբատ, Տրդատ, Բագրատ...
Քառասուն օր, քառասուն գիշեր...
                        Քառասուն օր, քառասուն գիշեր...